DOI 10.57192/18291864-2025.1-182

**Արսեն Է. Հարությունյան**
ars.vimagraget@gmail.com
orcid: 0000-0002-4890-5584

# ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ՝ ՍԲ ԵՎՍՏԱԹԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՈՒԽՏ*

Ամփոփում

Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքի պատմության ուսումնասիրման համար առաջնային սկզբնաղբյուր է պատմագիր Ստեփանոս Օրբելյանի պատմագիրքը (գրված՝ Նորավանքում, 1297 թ.): Պատմագիրը մանրամասն նկարագրում է Տաթևի վանքի Կաթողիկե եկեղեցու կառուցումն ու Սբ Պողոս-Պետրոս առաքյալների նշխարների ամփոփումը տաճարի զույգ մույթերի հիմքերում՝ չհիշատակելով Քրիստոսի կամ Սբ Թադեոս առաքյալի ենթադրյալ աշակերտ Սբ Եվստաթեոս-Եվստաթե-Ստաթեին: Վերջինիս անունը վկայված չէ նաև վաղ շրջանի մատենագրական և վարքագրական աղբյուրներում, այլ միայն 15-րդ դարից ի վեր:

Տաթևում Սբ Պողոս-Պետրոս առաքյալների անունների քողարկման և վանքը ենթադրյալ Սբ Եվստաթեոս առաքյալի անվան հետ զուգակցման բուն պատճառը կարելի է պայմանավորել ժամանակի եկեղեցաքաղաքական պայմանների թելադրանքով, երբ Կիլիկիայում գտնվող կաթողիկոսական աթոռի որդեգրած լատինամետ դիրքորոշման հետևանքով Սյունիքում ընդլայնվել էր ունիթորական շարժումը՝ Նախիջևանի Քոնա կենտրոնով: Այս տեսանկյունից, թերևս, սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ էր Սյունյաց հոգևոր և եպիսկոպոսանիստ կենտրոնն առաքելադիր հռչակելու հիմնական պատճառը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.03.2025:

Ինչ վերաբերում է Տաթև տեղանվանը, ապա այն քանիցս հիշվում է մատենագրական և վիմագրական աղբյուրներում, որոնցից վաղագույնը, թերևս, «Ներսեսյան» գահնամակում պահպանված տոհմանունն է՝ «Տաթևյանք», ապա նաև Օրբելյանի վկայությունները, 13–14–րդ դդ. ձեռագրերի հիշատակարաններն ու վանքի ժամանակամերձ վիմագրերը, այսինքն՝ Տաթև տեղանունը վավերացվում է դեռևս վաղ միջնադարում և հետագա դարերում: Սբ Եվստաթեոսի անվան շուրջ հյուսված ավանդության ու դրա կրոնական-քաղաքական դրդապատճառներից զատ, վանքի Կաթողիկեն այսօր նորից իր սուրբ առաքյալների՝ Պողոսի և Պետրոսի անունն է կրում, իսկ Սբ Եվստաթեոսի անվան հետ են կապում միայն վանքի պարսպից դուրս՝ հյուսիսարևելյան կողմում գտնվող կիսավեր հուշակառույցը:

**Բանալի բառեր** – Սյունիք, Տաթևի վանք, Սբ Եվստաթեոս առաքյալ, Սբ Պողոս-Պետրոս եկեղեցի, Ստեփանոս Օրբելյան, ունիթորական շարժում, Կիլիկիա, ձեռագիր, հիշատակարան, վիմագիր:

**Arsen E. Harutyunyan**

## TATEV MONASTERY AS A PLACE OF PILGRIMAGE OF ST. EUSTATHIUS THE APOSTLE

Abstract

For studying the history of Tatev Monastery - the spiritual and cultural center of Syunik, the primary source is the historical book by chronicler Stepanos Orbelyan (written in Noravank in 1297). The historian describes in detail the construction of the cathedral of Tatev Monastery and the placement of the relics of Saints Paul and Peter in the foundations of the twin columns of the temple, without mentioning the supposed disciple of Christ or Saint Thaddeus - Saint Eustathius (Eustace-State). The latter's name is not attested in early literary and hagiographic sources either, but appears only from the 15th century onwards.

The main reason for concealing the names of Apostles Paul and Peter in Tatev and associating the monastery with the supposed Apostle Eustathius can be attributed to the church-political conditions of the time, when as a result of the pro-Latin position adopted by the Catholicosate throne in Cilicia, the Unitor movement expanded in Syunik with its center in Krna in Nakhichevan. From this perspective, it can be argued

that this was the primary rationale for designating the spiritual and episcopal centre of Syunik as apostolic.

As for the toponym *Tatev*, it is mentioned multiple times in literary and epigraphic sources, the earliest of which is probably the family name *Tatevians* preserved in the "Nersesian" throne list, as well as Orbelian's testimonies, manuscripts from the 13th-14th centuries, and contemporary monastery inscriptions, meaning the toponym *Tatev* is documented as the early medieval period and in subsequent centuries. Apart from the legend woven around the name of Saint Eustathius and its religious-political motives, the monastery's main church today again bears the name of its holy apostles - Paul and Peter, while only the semi-ruined memorial pillar located outside the monastery wall on the northeastern side is associated with the name of St. Eustathius.

**Key words –** Syunik, Tatev Monastery, St. Eustathius the Apostle, St. Paul and Peter Church, Stepanos Orbelyan, Unitor movement, Cilicia, manuscript, colophon, epigraph.

**Арсен Э. Арутюнян**

## ТАТЕВСКИЙ МОНАСТЫРЬ КАК МЕСТО ПАЛОМНИЧЕСТВА СВЯТОГО АПОСТОЛА ЕВСТАФИЯ

Резюме

Для изучения истории Татевского монастыря – духовно-культурного центра Сюника, первоисточником является историческая книга летописца Степаноса Орбеляна (написанная в Нораванке в 1297 г.). Историк подробно описывает строительство Кафедрального собора Татевского монастыря и помещение мощей святых апостолов Павла и Петра в основания парных колонн храма, не упоминая при этом предполагаемого ученика Христа или Святого Фаддея – Святого Евстафия (Евстафе-Статея). Имя последнего не засвидетельствовано также в ранних литературных и агиографических источниках, а появляется только начиная с 15-го века.

Главная причина сокрытия имен апостолов Павла и Петра в Татеве и привязки монастыря к предполагаемому апостолу Евстафию может быть обусловлена церковно-политическими условиями того времени, когда в результате пролатинской позиции, принятой католикосским престолом в Киликии, в Сюнике расширилось униторское движение с центром в Крна в Нахичеване. С этой точки зрения, возможно, мы не ошибёмся, если скажем, что это была

основная причина провозглашения духовного и епископского центра Сюника апостольским.

Что касается топонима *Татев*, то он неоднократно упоминается в литературных и эпиграфических источниках, древнейшим из которых, вероятно, является родовое имя *Татевяны*, сохранившееся в “Нерсесском” престольном списке, а также свидетельства Орбеляна, рукописи 13-14 веков и современные им надписи монастыря, то есть топоним *Татев* документально подтверждается еще в раннем средневековье и в последующие века. Помимо легенды, сплетенной вокруг имени Святого Евстафия, и её религиозно-политических мотивов, Кафедральный собор монастыря сегодня снова носит имя своих святых апостолов – Павла и Петра, а с именем Св. Евстафия связывают только полуразрушенный памятный столб, находящийся за пределами монастырской стены с северо-восточной стороны.

**Ключевые слова** – Сюник, Татевский монастырь, Св. Евстафия, церковь апостолов Павла и Петра, Степанос Орбелян, униторское движение, Киликия, рукопись, памятний запись, надпись.

## Մուտք

Տաթևի վանքը, հայտնի նաև՝ Սբ Եվստաթեոս (Եվստաթե, Ստաթե) առաքյալի ուխտ, Եվստաթեի վանք և այլ անվանաձևերով, միջնադարյան Հայաստանի առավել նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոններից է: Վանքն իր հարուստ պատմամշակութային ժառանգության շնորհիվ մշտապես եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում՝ լինելով ինչպես պատմագիտական, այնպես էլ արվեստի պատմության տարբեր բնագավառներին առնչվող ուսումնասիրությունների առանցքում:

Վերջին տարիներին այդ շարքը փորձում ենք լրացնել նաև վիմագրագիտական և ձեռագրագիտական հետազոտություններով, որոնք երբեմն առիթ են դառնում նաև վանքի պատմության տարաբնույթ հարցերին նորովի անդրադառնալու համար: Այդօրինակ խնդիրներից է վանքի անվան հետ զուգակցվող Սբ Եվստաթեոս առաքյալի շուրջ ձևավորված ավանդությունը, որն ինչ-որ տեղ հակադրվում է վանքում Սբ Պողոս—Պետրոս առաքյալների մասունքների՝ Կաթողիկե եկեղեցու հիմքերում ամփոփված լինելու իրողության հետ, ինչով պայմանավորված՝ գրականության մեջ նմանօրինակ դրվագները հիմնականում շրջանցվել կամ խիստ հպանցիկ են ներկայացվել: Բավական է ասել, որ 13-րդ դարի պատմագիր, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի երկում

(գրված Նորավանքում՝ 1297 թ.), որն իրավամբ համարվում է Տաթևի վանքի պատմության առաջնային սկզբնաղբյուրներից մեկը, վանքի անվան ծագման առնչությամբ որևէ հստակ տեղեկություն չի հաղորդվում, փոխարենը պատմագիրը մանրամասն նկարագրում է վաղմիջնադարյան եկեղեցու տեղում գլխավոր տաճարի կառուցումը 895-906 թթ.՝ նվիրված Սբ Պողոս-Պետրոս առաքյալներին, որոնց նշխարներն ամփոփվել են նորահիմն տաճարի զույգ մույթերի հիմքերում:

Խնդրի ուսումնասիրությունն առաջին հայացքից հուշում է վաղքրիստոնեական սրբավայրերի համար ավանդական դարձած մի երևույթի մասին, երբ առաքյալների և նրանց ենթադրյալ աշակերտների քարոզչության, ապա՝ նահատակման վայրերում կանգնեցվում էին նոր կրոնի առաջին վկայարանները, որոնց տեղում հետագայում հիմնվեցին վանական խոշոր համալիրներ, ինչպես Արտազի Սբ Թադեի վանքը՝ Թադեոս առաքյալի, Աղբակի Սբ Բարդուղիմեոսի վանքը՝ Բարդուղիմեոսի, կամ Դադիվանքը՝ Թադեոսի աշակերտներից Դադի, Դադու կամ Դադոյի, Խադավանքը՝ Խադ եպիսկոպոսի, Սբ Եղիշա առաքյալի վանքը՝ Եղիշայի և այլն: Այս նույն տրամաբանությամբ էլ, փաստորեն, Տաթևի վանքն է ավանդաբար կառուցվել Քրիստոսի յոթանասուներկու կամ Թադեոս առաքյալի ենթադրյալ աշակերտներից Եվստաթեոսի (Եվստաթե-Ստաթեի) նահատակման և նշխարների ամփոփման վայրում, որի վկայությամբ տեղեկությունները մատենագրության մեջ ավանդված են առավելապես ուշմիջնադարյան աղբյուրներում, ինչն էլ դարձել է մեր սույն ուսումնասիրության խնդրո առարկան:

## 1. Սբ Եվստաթեոս առաքյալը հայ մատենագրության մեջ

Հայ գրավոր ժառանգության և բանավոր ավանդության մեջ շրջանառվում է Տաթևի վանքի անվան ստուգաբանման մի քանի տարբերակ, որոնցից առավել հայտնին Քրիստոսի յոթանասուներկու կամ Թադեոս առաքյալի աշակերտներից Եվստաթեոսի անվան հետ զուգակցման վարկածն է: Ըստ ավանդության՝ Եվստաթեոսը, հայտնի նաև՝ Եվստաթե, Ստաթեոս, Ստաթե, Ըստաթե, Դաթե[2] անվանաձևերով, Քրիստոսի յոթանասուներկու աշակերտներից էր, երբեմն էլ հիշվում է իբրև Թադեոսի աշակերտներից մեկը, որը, վերջինիս կողմից ձեռնադրվելով Սյունյաց ա-

[2] Անունը հունարենից (Εὐστάθιος) նշանակում է «հաստատուն, կայուն, մտքով ու գործով հավասարակշիռ» (Աճառյան, 1944, 151):

ռաջին եպիսկոպոս, մոտ 60–80 թթ. Սյունիքում քրիստոնեություն է քարոզել, նահատակվել անհավատների ձեռքով, իսկ նշխարների վրա հետագայում վանք է հիմնվել (Սալլանթեանց, 1831, 96; Շահխաթունեանց, 2014, 110; Օրմանեան, 2001, սիւն 25)[3]: Չնայած հիշյալ ավանդությանը՝ Սբ Գրքում Քրիստոսի յոթանասուներկու աշակերտների առաքելությանը վերաբերող հատվածում նրանցից որևէ մեկի անունն ուղղակիորեն վկայված չէ. *«Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ այլ եւս եւթանասուն եւ երկուս եւ առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս եւ ի տեղիս, ուր ինքն երթալոց էր»* (Ղուկ. Ժ. 1), թեև սա չի խանգարում, որ մատենագրության մեջ երբեմն հանդիպենք յոթանասուներկու աշակերտների հետ առնչվող անուններ, այդ թվում նաև՝ ոմն Ստաքոս (Միխայէլ Ասորի, 1871, 104):

**Նկ. 1 Տաթևի վանական համալիրը հարավ-արևմուտքից (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2015)**

[3] Կան նաև անվան ստուգաբանման այլ տարբերակներ ևս. դրանցից մեկն ավանդական հիմք ունի, ըստ որի. «ճարտարապետը, ավարտելով Տաթևի շինությունը՝ բարձրացել է գմբեթի վրա, դրել է խաչը և հետո խնդրելով ներքևում եղող բանվորներից երկու տախտակ՝ բռնել է ձեռներում, համբուրել և ասել. «Հոգին սուրբ տա թև»: Անմիջապես տախտակները թևերի են փոխարկվել, և նա թռել, անհետացել է: Այս պատճառով էլ վանքի անունը մնացել է Տա թև՝ Տաթև» (Լալայան, 2021, 22; Ղանալանյան, 1969, 230): Տաթև անունը կապում են նաև խեթալուվիական երկնքի և ամպրոպի աստվածության Դաթա կամ Տատա անվան հետ (Ումառյան, 1981, 30):

Սբ Եվստաթեոսի անվան շուրջ ձևավորված հիշատակումներն ավանդազրույցներում, ինչպես նաև պատմական, աստվածաբանական, առավել ևս՝ վարքագրական աղբյուրներում խիստ կցկտուր են[4]: Կարելի է ասել, որ մինչև 15-րդ դարն ընդգրկող գրավոր աղբյուրներում Սբ Եվստաթեոսն առհասարակ չի հիշատակվում, ինչն էլ առիթ է դարձել հետագա ուսումնասիրողներից ոմանց թերահավատորեն մոտենալու կամ ուղղակիորեն ժխտելու Տաթևի վանքի և առաքյալի անվան միջև առկա հնարավոր աղերսը: Առաջին հայացքից ուշագրավ է թվում 13-րդ դարի մատենագիր **Վարդան Արևելցուն** վերագրվող «Աշխարհացոյց»-ում վկայված հիշատակությունը՝ Սյունիքում Սբ Եվստաթեոս առաքյալի աթոռի գոյության և այն Տաթևի վանքի հետ նույնացնելու առիթով. *«Մեծ Սիւնիս եւ Փոքր Սիւնիս, ուր կայ աթոռն Եւստաթէի առաքելոյն, որ կոչի Տաթեւ»* (Վարդան վարդապետ, 1960, 12): Սակայն, երբ նկատի ենք առնում այն, որ «Աշխարհացոյց»-ը մեզ է հասել միայն ուշ շրջանի ընդօրինակություններով, որոնցից վաղագույնը 1565 թվակիր «Ոսկեփորիկ» ձեռագրում տեղ գտած միավորն է (Վնտկ 947/243) (ՄՑՀՁ ի Վենետիկ, 1924, սիւն 633), ինքնին հասկանալի է դառնում, որ բնագիրը հետագայում կարող էր խմբագրվել և լրացվել (Անթապյան, 1987, 90), առավել ևս, որ ֆրանսահայ հայագետ Հայկ Պերպերյանը փաստում է բնագրի՝ 24 ձեռագրերի և տպագիր երեք հրատարակությունների (Կ. Պոլիս, 1728 թ., Փարիզ, 1819 թ., Վենետիկ, 1887 թ.) համեմատական քննության արդյունքում պարզված տարընթերցումներն ու միջամտությունները (Վարդան վարդապետ, 1960, 12): Անկախ մեզ հետաքրքրող հատվածի՝ ուշ շրջանի հավելագրություն լինելու հավանականությունից, վկայված տեղեկությունը պարզում է, որ Մեծ ու Փոքր Սյունյաց աշխարհի աթոռանիստ կենտրոնում է գտնվել Սբ Եվստաթեոս առաքյալի աթոռը, այն է՝ եպիսկոպոսանիստը, որ նույն Տաթևն է: Ինչպես ստորև կտեսնենք, Տաթևում գտնվող Սյունյաց աթոռանիստը հաճախ Սբ Եվստաթեի անվան հետ է զուգակցվել նաև Տաթևի վանքից հայտնի 15-րդ և հետագա դարերի ձեռագրերի հիշատակարաններում, բայց ոչ երբեք Ստեփանոս Օրբելյանի երկում, վարքագրություններում կամ վաղ շրջանի մատենագրության մեջ: Ուստի նախ պարզենք

[4] Այդ անունով մատենագրությունից հայտնի են Եվստաթեոս Թեսաղոնիկեցին, որ մեկնել է Հոմերոսը, Եվստաթեոս եպս. Սեբաստացին, որը միայնակեցության նախահայրերից է, Եվստաքիոս եպս. Հայոց, որն ընդունեց Քաղկեդոնի դավանանքը և այլն (Աճառյան, 1944, 151-152):

գրավոր աղբյուրներում Սբ Եվստաթեոս առաքյալին առնչվող վկայությունների ժամանակագրությունը:

Սրբոց վարք-վկայաբանություններն ամփոփող «Հայսմավուրք» ժողովածուներում Սբ Եվստաթեոս առաքյալի վարքն առանձին վկայված չէ: Նրա անունը տարբեր առիթներով հիշատակվում է միայն կողմնակի կերպով, այն էլ՝ ուշ շրջանի խմբագրություններում. օրինակ՝ Սբ Պորփյուրոս եպիսկոպոսի վարքում. *«Մեհեկի ԻԸ. (28) և Մարտի Զ. (6). Վարք և յիշատակ Սրբոյն Պորփիւրոսի»*, որտեղ Սբ Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Աղվանից կաթողիկոս Սբ Գրիգորիսի նահատակությունից հետո նկարագրվում է նշխարների ամփոփման տեսարանը, որը տեղի ունեցավ. *«...ի գիւղաքաղաքն Ամարաս՝ յեկեղեցին, զոր հիմնարկեալ էր Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն և մանուկն Գրիգորիս կապարել էր զայն շինութեամբ և օրհնեալ: Եւ եդին անդ ընդ սուրբ մարմնոյն (Գրիգորիսի – Ա. Հ.) և շիշ մի լի արեամբ յարենէ սրբոյն Զաքարիայ՝ հօրն Յովհաննու Կարապետին, զոր բերեալ էր Եւսթաթէոս առաքեալն, որ էր յաշակերտաց սրբոյն Թադէոսի առաքելոյն, այլև ի նշխարաց սրբոյն Պանդալևոնի բժշկին, զոր բերեալ էր Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր և տրեալ իւրոյ թոռինն Գրիգորիսի»* (Յայսմաւուրք, 1730, 415): Սրա հետ մեկտեղ, Աղվանից աշխարհի պատմությունն ավանդած Մովսես Կաղանկատվացին Ամարասում ամփոփված սրբոց նշխարների առիթով Սբ Եվստաթեոսին չի հիշատակում, փոխարենը մասունքների տեղափոխումը վերագրում է Սբ Գրիգորիսին, որոնց մի մասը նա ավելի վաղ ամփոփում է. *«ի մեծ քաղաքն Ցրի (Ցոր – Ա. Հ.)»*՝ իր իսկ կառուցած եկեղեցում և. *«...դնէր անդ մեծ զգուշութեամբ մասն ինչ յարենէն Զաքարիայ և ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի»* (Մովսէս Կաղանկատուացի, 1983, 37): Նույն պատմագրի հաղորդմամբ՝ որոշ նշխարներ դեռ Սբ Գրիգորիսի մոտ էին, երբ նա նահատակվեց մազքութների թագավոր Սանեսանի հրոսակների ձեռքով՝ Վատնյան դաշտում: Այնուհետ նկարագրությունը կարծես կրկնվում է. Սբ Գրիգորիսի նշխարներն աշակերտներն ամփոփում են Ամարասի եկեղեցում՝ մեկտեղ դնելով Զաքարիայի սուրբ արյան սրվակն ու բժիշկ Պանդալեոնի նշխարը. *«Եւ այսպէս պսակէր սուրբն, զոր բարձեալ աշակերտացն՝ բերէին յԱմարաս գիւղաքաղաքն, որ էր ի գաւառին Հաբանդայ: Անդ եդեալ առ եկեղեցւոյն՝ հուպ ի բեմն ի հիւսիսոյ կողմանէ. և զսուրբ արիւնն Զաքարիայ ի միում ապակեղէն շշի եդեալ և ի միւսում շշի զերանելւոյն Պանդալիոնի զնշխարիս. և եդեալ զերկոսեան շիշսն ընդ ամենասուրբ նշխարսն մանկանն Գրիգորիսի և ինքեանք փախստեայ ի Հայս անկանէին»* (Մովսէս Կաղանկատուացի, 1983, 39):

«Հայսմավուրք» ժողովածուների մյուս հիշատակումներն ուղղակիորեն կապված են Տաթևի վանքի հետ՝ վկայված Սբ Գրիգոր Տաթևացու վարքում. *«Ահեկի Ի. (20) և Ապրիլի ԻԷ. (27). Վարք և յիշատակ երանելւոյն Եռամեծի Սրբոյն Գրիգորի Տաթևացոյն...»* խորագրի ներքո ներկայացվում են Սբ Գրիգոր Տաթևացու ուսումնառության, ուսուցչության, քարոզչության ու վախճանի մանրամասները, այդ թվում՝ աշակերտների հետ հաստատվելը. *«ի սուրբ ուխտն և շնորհալից գերահոչակ Աթոռն Ըստաթէի առաքելոյն»* (Յայսմաւուրք, 1730, 532): Այստեղ էլ նրա գլխավորությամբ հիմնվում ու ծաղկում է Տաթևի համալսարանը, զարգանում գրչության արվեստն ու մանրանկարչությունը, թարգմանվում, ընդօրինակվում են բազմաթիվ ձեռագրեր: Այստեղից քարոզչության գնալով Մեծոփավանք, ապա՝ Արարատյան երկիր, ուր լինում է նաև Երևանի Սբ Անանիա առաքյալի անապատում (ներկայիս Ջորավոր Սբ Աստվածածին եկեղեցու տեղում), Տաթևացին իր աշակերտների հետ վերադառնում է. *«...ի շնորհալից աթոռն իւր, ի Սուրբ առաքելոյն Սպաթէի»* (Յայսմաւուրք, 1730, 535), որտեղ էլ 1409 թ. վախճանվում ու թաղվում է. *«...ի շիրմի ի շնորհազարդ և յամենագով Աթոռն Սբ Սպաթէի առաքելոյն»* (Յայսմաւուրք, 1730, 535): Վերջին հիշատակությունը որոշակիորեն ընդգծում է առաքյալի նշխարների՝ Տաթևում ամփոփված լինելը:

Եկեղեցական մատենագրության ու պատմագրության մեջ Սբ Եվստաթեոս առաքյալի անունն առավելապես հիշատակված է 18-րդ և հետագա դարերի աղբյուրներում: Վաղագույն վկայություններից մեկը հաղորդում է **Սիմեոն Երևանցի կաթողիկոսն** (1763-1780) իր հայտնի «Ճամբոռում»: Հայրապետը նույնպես Սբ Եվստաթեոսին ներկայացնում է իբրև Սբ Թադեոս առաքյալի աշակերտներից մեկը, որը Սբ Եղիշա առաքյալի հետ միասին քրիստոնեության ուսմունքն է քարոզել Երուսաղեմից մինչև Եդեսիա ու Արտազ, որտեղ էլ Սբ Թադեոսի նահատակությունից հետո. *«Սպաթէ աշակերտն սորին ելեալ ընդ հիւսիսաւ գնայ ի Միւնիս և անդ կատարի բարի մահուամբ, յորոյ վերայ ևս շինեն վանք հրաշալի, որ կայ մինչև ցայսօր և կոչի Տաթևու վանք»* (Սիմեոն Երևանցի, 2022, 55): Ինչ վերաբերում է Եղիշային, ապա Երուսաղեմում Սբ Հակոբոսից եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո նա գալիս է Արտազի Սբ Թադեի վանք, այստեղից՝ Աղվանք, որտեղ էլ նահատակվում է (Սիմեոն Երևանցի, 2022, 55)[5]:

[5] Արցախում այսօր էլ մեծ տարածում ունի Սբ Եղիշա առաքյալի պաշտամունքը, որի նշխարներն Ուռեկան ավանից տեղափոխել ու ամփոփել են. *«ի Ներսմիհրայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ»* (Մովսէս Կաղանկատուացի, 1983, 12): Հե-

Վենետիկի Մխիթարյան միաբան **Հ. Միքայել վրդ. Չամչյանցը** Սբ Եվստաթեոսին համարում է Քրիստոսի յոթանասուն (կամ յոթանասուներկու) աշակերտներից մեկը, որը եկավ Հայաստան. *«...և նահապետական թաղեցաւ ի տեղւոջն, որ այժմ յանուն նորա կոչի Սրաթն, այն է՝ Տաթև»* (Չամչյանց, 1985, 298–299): Այդ է փաստում նաև Սբ Էջմիածնի միաբան **Միքայել ծ. վրդ. Սալլանթեանցը՝** *«Եւսրաթէոս Սիւնեաց»* առաջնորդին ներկայացնելով իբրև առաջին դարում գահակալած եպիսկոպոսներից մեկը, որի անունը տեղադրում է նաև առաքելական հաջորդության անվանացանկում. *«Սրաթէոս առաքեալ՝ աշակերտ Թադէոսի, յամս իբր 60–80 քարոզեաց ի մեծ Հայաստան»* (Սալլանթեանց, 1831, 96): Նույնն է արձանագրում նաև Սբ Էջմիածնի միաբան **Հովհաննես եպս. Շահխաթունյանցը**. *«Եւսրաթէոս կամ Սրաթէ. մին յաշակերտաց սուրբ առաքելոյն Թադէոսի, որոյ ի գալն ի Հայաստան էր ընդ վարդապետին իւրոյ եւ ձեռնադրեցաւ ի նմանէ եպիսկոպոս: Եւ մնացեալ ի Հայաստան՝ քարոզեաց ի Սիւնիս եւ անդ կատարեցաւ»* (Շահխաթունեանց, 2014, 110): Այն ավանդաբար վավերացվել է նաև ժամագրքերի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդների անվանացանկում, որտեղ Եվստաթեոսը դարձյալ Սբ Թադեոս առաքյալի կողմից եպիսկոպոս ձեռնադրվածներից մեկն է. *«ձեռնադրութեամբ Թադէոսի առաքելոյն կարգեալ առաջին եպիսկոպոսունքն են յԵդեսիա՝ Ադդէ (յամին 34), ի մեծ Հայս՝ Զաքարիա (40) և Սրաթէոս (60)...»* (Ժամագիրք, 1885, 653–654):

Հիշատակելի սրբերի շարքում Սբ Եվստաթեոսի անունը չի մոռանում վկայակոչել Կ. Պոլսի հայոց պատրիարք **Մաղաքիա արք. Օրմանյանը** (1896–1908), որի համոզմամբ. *«առաքելաշաւիղ քարոզողներուն մէջ պէտք է յիշուի նաեւ Եւսրաթէոս, որ ճանչցուած է իբր աշակերտ Թադէոսի, եւ անոր կողմանէ Սիւնեաց առաջին եպիսկոպոս ձեռնադրուած»* (Օրմանեան, 2001, սիւն 25): Մաղաքիա պատրիարքը նույնպես Եվստաթեոսի գերեզմանն ավանդաբար պաշտված է համարում Տաթևի վանքում՝ նշելով, որ. *«Իր գործունէութեան եւ վախճանին վրայ տեղեկութիւններ չունինք, միայն գիտենք, թէ իր գերեզմանը պատրուուած է Տաթևու վանքին մէջ , որուն անունն ալ Եւսրաթէոսի անունէն առնուած կը կարծուի, իբր Եւսրաթէի վանք»* (Օրմանեան, 2001, սիւն 25): Այս առիթով տեղին է հիշա-

---

տագայում Աղվանից Վաչագան Բարեպաշտ թագավորը հուշայուն է կանգնեցրել Եղիշայի նահատակության գբի վրա, իսկ թագավորի մենակյաց սենեկապանը, առանձնանալով այդ սյան վրա, ամփոփել է իր կյանքը (Մովսէս Կաղանկատուացի, 1983, 12): Մակար եպս. Բարխուդարյանցի հաղորդմամբ՝ 19-րդ դարավերջին արդեն. «անյայտացած է սիւնն եւ լցուած հորն, բացի մի կանգուն խորութիւնից» (Բարխուտարեանց, 1999, 132):

տակել Սբ Էջմիածնի միաբան **Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիս-յանի** նկարագրությունը, ըստ որի՝ Տաթևի վանքի պարսպից դուրս են միայն. *«...մի քանի մատուռներ, հասարակ միաբանների գերեզմանատու-նը, վանքի կալն ու ժամանակաւոր հարթանոցը, ջրաղացը և ձիթահանքը»* (Տէր-Մովսիսեան, 1938, 6): Սյունյաց առաջնորդ և Տաթևի վանահայր **Ար-տակ եպս. Սմբատյանը** (1922-1926) հստակեցնում է վանքի պարսպից դուրս, վանական գերեզմանոցի հարավարևմտյան կողմում գտնվող կի-սավեր մատուռի որպիսությունը՝ նշելով, որ ժողովուրդն այն կառուցված է համարում Եվստաթեոս առաքյալի նահատակության տեղում, սակայն. *«...հակառակ այդ աւանդութեան, ժողովուրդը այդ մատուռը չէ յարգում իբ-րեւ ուխտատեղի»* (Սմբատեան, 1930, 279): Հետաքրքրական է, որ այսպես կոչված կիսավեր մատուռն այսօր էլ չունի ուխտատեղի նշանակություն և տեղացիների կողմից պարզապես կոչվում է *«Աղքատաց եկեղեցի»* (Մկրտչյան, 2010, 93), թեև կից ցուցանակին կարդում ենք. *«Սբ Եվստա-թեոսի մատուռ, 5-րդ դար»*, այսինքն՝ հուշարձանն ավանդույթի ուժով վե-րագրվել է Սբ Եվստաթեոս առաքյալին: Ի հավելումն նշենք, որ վերա-կանգնող-ճարտարապետներ Սամվել Այվազյանի և Ամիրան Բադիշյանի կողմից վերջերս վերակազմվել է ենթադրյալ մատուռի նախնական ճար-տարապետական հորինվածքն ու հստակեցվել կառույցի գործառութային նշանակությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ բաց խորան ունեցող հուշակո-թող, որի լավագույն զուգահեռն Աղիտուի վաղմիջնադարյան հուշար-ձանն է (Այվազյան և Բադիշյան, 2024, 16-18): Տաթևի հուշակոթողի կամա-րակապ բաց խորան-խորշի հետնապատին ագուցված խաչքարի քանդա-կային լուծումները, ինչպես նաև հուշարձանի կապը բուն համալիրի հետ թույլ են տալիս արձանագրել, որ այն թվագրելի է առնվազն 9-10-րդ դա-րերով (Harutyunyan, 2024, pp. 9-10):

## 2. Ստեփանոս Օրբելյանը չի հիշատակում Սբ Եվստաթեոսին

Հակառակ վերոբերյալ հիշատակումների, Ստեփանոս Օրբելյանի Սյունյաց պատմագրքում, ինչպես վերը նշեցինք, Եվստաթեոս առաքյալի վերաբերյալ որևէ տեղեկություն չի հաղորդվում և սա այն դեպքում, երբ Սյունյաց պատմիչը երկրորդական թվացող մի շարք այլ դրվագներ ման-րամասն նկարագրել-լուսաբանել է: Պատմագիրն իբրև Սյունյաց առաջին եպիսկոպոս է հիշում ոչ թե Թադեոսի կողմից ձեռնադրված Եվստաթեո-սին, ինչպես հաղորդում են ուշ շրջանի աղբյուրները, այլ՝ Բարդուղիմեո-սի աշակերտ և վերջինիս կողմից ձեռնադրված Կումսիին. *«Ապա կացու-*

*ցանէ (Բարդուղիմեոսը – Ա. Հ.) նոցա տեսուչս, զի մի՛ վերստին մոլորեսցին ի կռապաշտութիւն, զոմն յաշակերտաց իւրոց Կումսի անուն, ձեռնադրեալ զնա եպիսկոպոս»* (Ստեփանոս Օրբէլեան, 1910, 22), որի հիմամբ էլ Կումսի եպիսկոպոսը գլխավորում է Սյունյաց հոգևոր առաջնորդների գավազանագիրքը (Ալիշան, 1893, 326; Սմբատեան, 1930, 343):

Տաթևի վանքի հիմնադրման առիթով պատմագիրը նշում է, որ Սյունյաց եպիսկոպոսներն ընտրեցին Դիզափայտի լեռներին հանդիպակաց և բարձր դիտանոց հիշեցնող այդ վայրը. *«ուր բազմութիւնք սուրբ վկայիցս հանգուցեալ կան»* (Ստեփանոս Օրբէլեան, 1910, 202) և ուր դեռևս Ներսես Ա. Մեծ (353–373) և Սահակ Ա. Պարթև (387–436) կաթողիկոսների ժամանակներից անշուք ու անտաշ քարերով շինված փոքր եկեղեցի կար. *«և սակաւ կրօնաւորք մշտաջան ճգնութեամբ բնակէին ի նմա»* (Ստեփանոս Օրբէլեան, 1910, 202): Մեկ այլ առիթով էլ ներկայացնում է Հայր Գյուտի և ոմն քրիստոսասերի պատմությունը (գլ. ԻԱ), երբ Երասխի ափին վանք է հիմնվում, իսկ Տերը Գյուտին զորախմբից առանձնացնում է ինչպես Եվստաթեոսին (Ստեփանոս Օրբէլեան, 1910, 81), բայց այս դեպքում նկատի ունի 4-րդ դարի գործիչ Եվստաթեոս եպս. Սեբաստացուն՝ վանականության, միայնակեցության նախահորը (Ստեփանոս Օրբելյան, 1986, 432): Ստացվում է, որ Սյունյաց պատմագրին Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունն անծանոթ է եղել կամ ինչ-ինչ պատճառներով նա փորձել է շրջանցել նրան: Թերևս հենց սա էլ հիմք է դարձել որոշ ուսումնասիրողների՝ բացառելու այդ ենթադրյալ առաքյալի և վանքի անվան միջև առկա արհեստածին կապը:

Այսպես. Ստեփանոս Օրբելյանի պատմագրքի փարիզյան հրատարակության առաջաբանում Սբ Էջմիածնի միաբան **Կարապետ վրդ. Շահնազարյանցն** առնվազն տարօրինակ է համարում այն, որ պատմահայր Մովսես Խորենացին, Ստեփանոս Ասողիկը, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, Վանական վարդապետը և, առավել ևս, Ստեփանոս Օրբելյանն իրենց երկերում չեն հիշատակում Թադեոս առաքյալի աշակերտ, Սյունյաց առաջին եպիսկոպոս Եվստաթեոսին (Ստեփանոս Օրբէլեան, 1859, 31): Փոխարենն Օրբելյանը մանրամասն նկարագրում է Տաթևի վաղմիջնադարյան փոքր եկեղեցու տեղում, Սյունյաց առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի օրոք և վերջինիս տեսիլքի համաձայն՝ վանքի Կաթողիկե եկեղեցու կառուցումը 895–906 թթ., որն իրագործվել է Սյունյաց իշխանների մեկենասությամբ. *«յանուն սուրբ և գլխաւոր առաքելոցն՝ վիմին Պետրոսի և առաքելոյն Պօղոսի... յորոց նշխարացս եդան ի ներքոյ սեանցս»* (Ստեփանոս Օրբէլեան, 1910, 223, 225): Փորձենք պարզել, թե այս

վկայությունը, ըստ որի՝ վանքի գլխավոր եկեղեցին նվիրված է Սբ Պողոս-Պետրոս առաքյալներին և որտեղ ամփոփված են նրանց նշխարները, ինչո՞ւ է այլափոխվել կամ քողարկվել հետագա դարերի վավերագրերում:

## 3. Սբ Պողոս-Պետրոս առաքյալներին «փոխարինելու» եկավ Սբ Եվստաթեոսը

Սյունյաց պատմագրքի վերոհիշյալ առաջաբանում Կարապետ վրդ. Շահնազարյանցը նշում է, որ 13-րդ դարի վերջերից (նկատի ունի Վարդան Արևելցուն վերագրվող հաղորդումը) Տաթևում Սբ Պողոս-Պետրոս առաքյալների փոխարեն Սբ Եվստաթեոս կամ Ստաթե առաքյալի անվան ի հայտ գալն առաջին հերթին պիտի պայմանավորել Կիլիկիայում գտնվող կաթողիկոսական աթոռի որդեգրած լատինամետ դիրքորոշմամբ, որի հետևանքով ընդլայնվեց նաև ունիթորական կամ միարարական շարժումը (Ստեփանոս Օրբէլեան, 1859, 32): Գաղտնիք չէ, որ հունահռոմեական եկեղեցիների ճնշման հետևանքով Կիլիկյան հոգևոր և աշխարհիկ առաջնորդների կողմից արված դավանաբանական զիջումներն ու պապական գերիշխանության հաստատմանը միտված քայլերը լրջագույն վտանգ էին ներկայացնում՝ պառակտման եզրին կանգնեցնելով ավանդական Հայ եկեղեցին, որի անաղարտության համար մշտական պայքար են մղել, այսպես կոչված, Արևելյան վարդապետները՝ ի դեմս Սյունյաց եպիսկոպոսների (Մկրտչյան, 2013, 14): Հենց նրանք էին, որ գիտակցելով Եվրոպայից օգնություն ակնկալելու անիրական լինելը՝ ջանք չէին խնայում Սսում մեկուսացած հայրապետական աթոռը Էջմիածնում վերահաստատելու ուղղությամբ, որը հաջողեցին միայն 1441 թ. (Խաչիկյան, 2017, 78): Սյունյաց մետրոպոլիտ և պրոտոֆրոնտես (նախաթոռ եպիսկոպոս) Ստեփանոս Օրբելյանի վարած քաղաքականությունն այդ պայքարի ծավալման լավագույն սկիզբը կարելի է համարել, երբ Կիլիկիայում Հեթում Բ-ի ցանկությամբ կաթողիկոսական գահը ստանձնած Գրիգոր Է Անավարզեցու (1293-1307) կրոնական նորամուծություններին[6] Սյունյաց աթոռը մերժողական պատասխան-թուղթ է տալիս կաթողիկոսի պատվիրակ և հաջորդ Կոստանդին եպս. Կեսարացուն (Ստեփանոս Օրբէլեան,

[6] Գրիգոր Անավարզեցին և իր հաջորդ Կոստանդին Կեսարացին ընդունել էին պատարագի բաժակի մեջ ջուր խառնելու, Սբ Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոնելու պահանջները և. «խոստանայր յանձն առնուլ զոր ինչ եւ խնդրեսցեն» (Օրբէլեան, 1910, 327-328):

1910, 84): Ստեփանոս Օրբելյանն այն զետեղել է նաև իր պատմագրքում՝ իբրև առանձին միավոր[7], իսկ 1302 թ. գրում է իր հայտնի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատությունը՝ հիմնված Սբ Գրքի և Հայ եկեղեցու հայրերի ավանդած գաղափարախոսության վրա[8]: Ասվածի առհավատչյան է նաև Տաթևի վանքի երբեմնի զանգակատան զույգ զանգերից մեկի 1304 թվակիր արձանագրությունը, ուր Ստեփանոս Օրբելյանը դարձյալ հիշվում է իբրև Հայ եկեղեցու ավանդը (դավանանքը) մեծ դժվարությամբ ուղղափառ, այսինքն՝ դավանաբանական շեղումներից զերծ պահողներից մեկը. *«այս Տէր Ստեփանոս Օրպէլեան, մեծաւ ջանիւ ուղղափառ պահել զաւանդս յէկեղեցիս Հայոց»* (Harutyunyan, 2024, 123)[9]:

Սյունյաց աթոռի համար ունիթորական շարժումը վտանգավոր էր դարձել հատկապես 14-րդ դարի սկզբներին, երբ Նախիջևանի Երնջակ և Ճահուկ գավառներում շարժման հետևորդները քարոզչության նոր կենտրոններ էին ստեղծում: Դրան ի պատասխան, ըստ ամենայնի, Տաթևում փորձ է արվել դիվանագիտորեն քողարկելու կաթոլիկ եկեղեցու առաջադեմ սուրբ առաքյալների անունները. *«ոմանք ի մերոց հակառակասիրաց ի ժամանակի զայրանալոյ ունիթոռութեանն ի Ճահուկ եւ յԵրնջակ՝ փոփոխմամբս այսուիկ անհեր առնել կամեցան զանուանս երկուց առաքելոցն Հռոմէական եկեղեցւոյ (Պողոսի և Պետրոսի – Ա. Հ.)»* (Ստեփանոս Օրբէլեան, 1859, 32):

Գլաձորի համալսարանի սան Հովհաննես Քռնեցու և իր համախոհների՝ Մարաղայի եպիսկոպոս Բարդուղիմեոս Բոլոնացու, Պետրոս Արագոնացու, Հովհաննես Անգլիացու կողմից Քռնայում՝ 1330 թ. հրավիրված ժողովը նոր կանոնադրություն է ընդունել, որի հիմամբ կազմվել է Հովհաննես Քռնեցու հայտնի շրջաբերականը, ըստ որի՝ հիմնվում է «Կարգ միաբանողաց եղբարց Սբ Գրիգորի Լուսաւորչին» միաբանությունը, որի նպատակը Հայոց եկեղեցին հռոմեա-կաթոլիկականի հետ միավորելն էր (Այվազյան, 2008, 45; Հարությունյան, 2014, 387): Անշուշտ, նրանց դեմ դավանաբանական մշտական պայքարի մեջ էին նաև Սյունյաց աթոռին Ստեփանոս Օրբելյանին հաջորդած մետրոպոլիտները՝ Հովհաննես-Օր-

---

[7] *«ԿԹ. Թուղթ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ յարեւելեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց Տէր Գրիգոր, գրեալ ձեռամբ Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ընդ նմին եւ դաւանութիւն ուղղափառ հաւատոյ սրբոցն Գրիգորի Սքանչելագործի եւ Աթանասի Աղեքսանդրացւոյ»* (Օրբէլեան, 1910, 449-467):

[8] Այդ աշխատությունը հայտնի էր Կ. Պոլսի 1756 թ. հրատարակությամբ, մինչդեռ վերջերս հրատարակվեց նաև արևելահայերեն փոխադրմամբ (Օրբելյան, 2023, 5):

[9] Հետաքրքիրն այն է, որ չնայած իր եռանդուն պայքարին, Ստեփանոս Օրբելյանն իր պատմագրքում հավատարիմ է մնացել ճշմարտությանը, և Սբ Պողոս-Պետրոսին արհեստականորեն չի փոխարինել Սբ Եվստաթեոսով:

բելն ու Ստեփանոս-Տարսայիճը, ինչպես նաև՝ Գլաձորի ռաբունապետ Եսայի Նչեցին: Նշելի է Գրիգոր Անավարզեցու հաջորդ Կոստանդին Գ Կեսարացուն (1307-1322) ուղղված նամակը, որտեղ հիշյալ առաջնորդներն իրենց անհնազանդությունն են հայտնել Կիլիկիայի միարարական ձգտումներին (Մկրտչյան, 2013, 100):

Նկատենք, որ 14-15-րդ դդ. Քռնան հայտնի է դարձել նաև իր դպրոցով, ուր թարգմանվել ու ընդօրինակվել են անտիկ մտածողների, փիլիսոփաների իմաստասիրական երկեր, դասավանդվել ու զարգացել է գրչարվեստը (Այվազյան, 2008, 45-46), սակայն, դավանաբանական առումով կաթոլիկ միաբանության ստեղծումն ու զարգացումը Հայաստանում չէր կարող խրախուսվել Հայ եկեղեցու կողմից և կարող էր ուղղակիորեն նպաստել Հռոմի կաթոլիկ եկեղեցու երկու նշանավոր առաքյալների՝ Պողոսի և Պետրոսի անունների փոխարինմանն այլ սրբանվամբ, որ տվյալ դեպքում Տաթև տեղանվանը հարիր և Սբ Թադեոսին համադիր առաքելաշնորհ Սբ Եվստաթեոսն է: Անվանափոխության երկրորդ պատճառն ըստ Կարապետ վարդապետի՝ ուղղակիորեն կարող էր անունների մերձավորությամբ առաջացած շփոթի հետևանք լինել, ըստ որի՝ Տաթևն առաջացել է Եվստաթե-Ստաթեից, ուստի Տաթևը համապատասխանեցրին Եվստաթեին (Օրբէլեան, 1859, 32-33):

Հետևելով Կարապետ վրդ. Շահնազարյանցի վերոհիշյալ նկատառումներին՝ **Հ. Ղևոնդ Ալիշանը** ևս քննադատաբար է մոտենում խնդրին և, կարելի է ասել, ժխտում է Տաթև-Եվստաթեոս անվանական կապը՝ պատճառաբանելով, թե Ստեփանոս Օրբելյանի պատմագրքում այդանուն սրբի մասին որևէ հիշատակություն չկա: Ավելին՝ նրա վարքը չի ընդգրկվել Հայսմավուրքում կամ այլ վկայաբանական ժողովածուներում, ինչից ենթադրում է, որ Եվստաթեոսը. *«ոչ միայն անծանօթ է այլոց եկեղեցեաց, այլ և ի մեր իսկ Յայսմաւուրս ոչ գրանի օր տօնի նորա, այլ միայն ի յիշատակի այլոց ոմանց Սրբոց ի հարեւանցի...»* (Ալիշան, 1893, 224): Նա նույնիսկ դիտարկում է Եվստաթեոսի կամ Ստաթեի անվան փոխարեն Թադեոսի կամ Թադեի անվան հավանականությունը, քանի որ *«շատ երկբայական է այդ անձն (Եվստաթեոսը – Ա. Հ.), ոչ միայն, որ յօտարաց չի յիշուիր, այլ և ոչ ի Վանականէ, որ բոլոր Հայոց աւետարանիչ Առաքեալներն և Աշակերտները նշանակած է»* (Ալիշան, 1901, 23-24): Ի դեպ, ինչպես Սյունիքում Եվստաթեն, այնպես էլ Արցախում Դադո-Դադի-Դադուն, ձեռագրերի հիշատակարաններում երբեմն Թադեոս առաքյալին անվանամերձ են հիշվում, ինչը կարծես թե հավաստի է դարձնում Ալիշանի կռահումը, որը մենք ևս չենք բացառում: Օրինակ՝ Տաթևի վանքը ձեռագրերի

հիշատակարաններում երբեմն վկայված է Դաթէ (ՄՄ 8505), Սդաթէ (ՄՄ 2441), Ըստթադէ (ՄՄ 360, 785, 4823), Ըստաթէ (ՄՄ 4061) անվանաձևերով, իսկ **Միքայել Ասորու** ժամանակագրության հայերեն խմբագրյալ թարգմանության վերջին՝ «Յաղագս քահանայութեան» մասում Դադիվանքն ուղղակիորեն առաքելադիր վանք է ներկայացվում, որտեղ Դադին Թադեոսն է՝ յոթանասունից մեկը, Թադեի աշակերտը. *«Թադէոս, մի յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէի՝ ի Մեծն Հայք, և ի կողմանս հիւսիսոյ և լուեալ զմահն Աբգարու և դարձաւ և եմուտ ի Փոքր Սիւնիք և կրօնաւորեալ անդէն ծածկաբար վախճանեցաւ և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ»* (Միխայէլ Ասորի, 1871, հաւելուած 33): Նկատելի է, որ ինչպես Տաթևի, այնպես էլ Դադիվանքի հիմնադրման ավանդության հիմքում սրբերի անունները Թադեոսի անվան հետ ինչ-որ կերպ հարմարեցնելու միտում է եղել, որտեղ անվանադիր սրբերը հանդես են գալիս հայ առաքելական եկեղեցու հիմնադիր առաքյալի՝ Թադեոսի աշակերտի «կարգավիճակում»՝ ընդհուպ մինչև քարոզչության ու նահատակության տեսարանները: Տարբերությունն այն է, որ եթե Դադիի դեպքում կարելի է հավանական համարել, որ ավանդության հիմքում 12-րդ դարի վերջերից սկիզբ առած Զաքարյանների գլխավորած ազատագրական «սրբազան» պայքարն էր՝ համաքրիստոնեական աշխարհի ազատագրման առաքելականությունը (Պետրոսյան, 2017, 236-237)[10], ապա Տաթևի պարագայում, մեր համոզմամբ, խնդրի պատասխանը պետք է որոնել ունիթորական կամ միարարական շարժման հնարավոր վտանգից, ինչու չէ նաև առաքյալների նշխարները հափշտակումից ապահովագրելու նպատակով հյուսված ավանդության մեջ, երբ առաքելացրել ու Տաթև տեղանվան հետ են հարմարեցրել Թադեոսից բխող Եվստաթեոս – Եվստաթե – Ստաթեին՝ ընդգծելով Սյունյաց եպիսկոպոսանիստ կենտրոնի առաքելադիր լինելը:

[10] Հնագետ Համլետ Պետրոսյանի բնորոշմամբ՝ ազատագրական այս «սրբազան» պատերազմում արագ հզորացող իշխանական տներն իրենց պայքարում տեղական սրբերը փոխարինել են համաքրիստոնեական սրբերով, ինչպես Վերին Խաչենի կամ Հաթերքի տերերը վերհանել են Դադոյի կամ Դադեի կերպարը. «հիմքում ունենալով նրա անվան նմանությունը սուրբ Թադե-Թադեոսին և թերևս տեղական ինչ-ինչ ավանդազրույցներ» ([Պետրոսյան], Դադիվանք. Սուրբ Դադիի և նրա գերեզմանի մասին – https://monumentwatch.org/hy/monument/%D5%A4%D5%A1%D5%A4%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2%D5%A4%D5%A1%D5%A4%D5%AB%D5%AB%D6%87%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80%D5%A5%D5%A6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B4/ – մուտք 22.12.2024):

Առաքյալներին վերագրվող սրբազան ավանդությունները միջնադարյան աղբյուրներում հաճախադեպ են: Դադիվանքին զուգահեռ կարելի է հիշատակել նաև Սբ Եղիշա առաքյալի պաշտամունքն Արցախում, որի նախատիպը, ըստ էության, Վարդան Մամիկոնյանի զինակից Եղիշե վարդապետն էր (Խառատյան, 2001, 58), իսկ Կարենիսում՝ Սբ Մատթեոս և Սբ Անդրեաս առաքյալներին նվիրված վանքի վաղմիջնադարյան թաղածածկ եկեղեցու ստորգետնյա դամբարանի արևելյան խորշում այսօր էլ պահպանվել է սրբոց մասուքներն ամփոփած երկմաս քարատապան-մասունքարանը (Միրիջանյան, 2017, 183-184): Ի դեպ, պատմագիր Առաքել Դավրիժեցին մանրամասն նկարագրել է 17-րդ դարում Կարենիսում հիշյալ առաքյալների մասունքների հափշտակումը ֆռանկ (կաթոլիկ) հայրերի կողմից, որը կանխել են տեղի վանականները (Դաւրիժեցի, 1990, 168): Նույնը տեղի է ունեցել նաև Վաղարշապատում, երբ ֆռանկ կրոնավորները հափշտակել են Սբ Հռիփսիմեի մասունքներն ու տարել Սպահան (Առաքել Դաւրիժեցի, 1990, 168-181): Թերևս այդ նույն երևույթի հետևանք պիտի համարել նաև Սյունիքում՝ հատկապես Գորիսի տարածաշրջանում Սբ Հռիփսիմեի և Սբ Մինասի պաշտամունքի աննախադեպ տարածումը 17-րդ դարում, որի առհավատչյան հիշյալ սրբերի անվանակիր եկեղեցիների զանգվածային կառուցումն էր տարբեր բնակավայրերում (Խնձորեսկ, Վերիշեն, Հալիձոր, Հարժիս, Տաթև, Տանձատափ և այլն):

Սբ. Եվստաթեոս առաքյալին վերագրվող հայտնի ավանդությունն անստույգ է համարում նաև ազգագրագետ **Երվանդ Լալայանը**: Նա նույնպես նկատում է, որ Օրբելյան պատմագիրն այդ մասին ոչինչ չի հաղորդում, բացի այդ՝ վստահ չէ, որ Թադեոս առաքյալն այդանուն աշակերտ է ունեցել և, որ կարևորն է, Տաթև տեղանունը պիտի գոյություն ունեցած լիներ շատ ավելի վաղ, քանզի «Ներսեսյան» գահնամակում հիշվում են նաև Տաթևյանք (Լալայան, 2021, 13): Ե. Լալայանի հիշատակած գահնամակի առիթով ասենք, որ «Ներսեսյան» գահնամակը, որը նաև «կեղծ» գահնամակ է կոչվում՝ Սահակ Պարթևին վերագրվող բուն գահնամակից տարբերելու համար, մեզ է հասել 10-րդ դարի մատենագիր Մեսրոպ երեց Վայոցձորեցու «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի» խորագրով երկում, որը գրվել է 967 թ. և հայտնի է նաև Ներսես Ա. Պարթև կաթողիկոսի «Վարք» անվամբ: Բնագրում հիշատակված է Ներսես կաթողիկոսի վերահաստատած Հայոց իշխանների գահացանկը՝ 167 անուն, որի 145-րդը՝ «Տաթեւեանք» (Մեսրոպ Վայոցձորեցի, 2010, 685; Յակոբեան, 2011, 493-494): Այսինքն՝ առնվազն 4-5-րդ դդ. Տաթև տեղանվանաձևն արդեն իսկ կենցաղավարել է, որպիսին այն հիշվել է գահնա-

մակում և քանիցս վկայակոչվել նաև Ստեփանոս Օրբելյանի պատմագրքի՝ 9–10–րդ դդ. տեղի ունեցած հիշարժան դեպքերի առիթով: Դրանցից ակնառու են 9–րդ դարասկզբին Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը Շաղատից Տաթև փոխադրվելուց հետո տեղի Դավիթ եպիսկոպոսի կողմից 839 թ. իշխան Փիլիպպեից 10.000 դրամով Արծիվ գյուղն ու Բերդկաներեչ ագարակն ապահարկ գնելու, իսկ արդեն 844 թ. Տաթև գյուղը միևնույն իշխանի կողմից վանքին նվիրաբերելու և վանքապատկան դարձնելու իրադարձությունները (Ստեփանոս Օրբէլեան, 1910, 204–208):

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Ստեփանոս Օրբելյանն իր պատմագիրքը շարադրելիս, ինչպես ինքն է վկայում, օգտվել է թագավորական հրովարտակներից, դիվանական վավերագրերից, կալվածագրերից, վիմագրերից ու ձեռագրաց հիշատակարաններից (Օրբէլեան, 1910, 10), այսինքն՝ նշված գրավոր աղբյուրներում պատմագիրը Եվստաթեոսի մասին որևէ հիշատակություն չի գտել, իհարկե, եթե բացառենք պատմագրի՝ Եստաթեոսին միտումնավոր չհիշատակելու մոտեցումը: Դրանում համոզվելու համար փորձենք ինքներս վերանայել Տաթևի վիմագրերում, ինչպես նաև այս գրչակենտրոնում ընդօրինակված ու պահված ձեռագրերի հիշատակարաններում վանքի ու առաքյալի անունների միջև առկա հնարավոր աղերսը:

## 4. Սբ. Եվստաթեոս առաքյալը՝ վիմագիր և ձեռագիր աղբյուրներում

Տաթևի վանքից մեզ հասած վիմագրերում Եվստաթեոս առաքյալի անունն ուղղակիորեն վկայված չէ, փոխարենը վանքի 13–14–րդ դդ. շուրջ մեկ տասնյակ վիմագրերում, ինչպես նաև 1532 թվակիր մեկ այլ նվիրագրում վանքի Կաթողիկեն հիշվում է *Սբ Առաքելոց*, իսկ վանքն ու տեղանունը՝ *Տաթև*, երբեմն էլ՝ *Սբ ուխտ (վանք–միաբանություն)* կամ *առաքելական աթոռ* անուններով (Դիվան հայ վիմագրության, 1960, 15–16, 21, 26, 27, 30; Harutyunyan, 2024, 59, 62, 65, 67, 74, 77, 78, 115): Օրինակ՝ Կաթողիկե եկեղեցու հարավային մույթի հյուսիսային նիստի 1274 թ. կիսաեղծ վիմագրում Տարսայիձ Օրբելյանը վկայում է. «միաբանեցայ Տաթեւոյ Սուրբ Առաքելոցս» (Դիվան հայ վիմագրության, 1960, 15–16; Harutyunyan, 2024, 59), կամ միևնույն մույթի արևմտյան նիստի 13–րդ դարի երկրորդ կեսով թվագրվող ընդարձակ նվիրագրում Տեր Աբրահամ եպիսկոպոսը հայտնում է, որ. «ժամանեցա Տաթեւու Առաքելոց Սբ եկեղեցիս» (Դիվան հայ վիմագրության, 1960, 16; Harutyunyan, 2024, 62): Ակնհայտ է, որ հիշյալ օ–

ինակներում *Տաթև* անվանաձևն օգտագործվել է վանքի և տեղանվան համար միաժամանակ, իսկ բուն եկեղեցին՝ *Սբ Առաքելոց*՝ առանց հատկանշելու ենթադրյալ զույգ առաքյալների անունները:

Ինչ վերաբերում է ձեռագիր աղբյուրներին, ապա կարելի է ասել, որ 13-րդ դարից վաղ թվագրմամբ մատյաններ Տաթևից մեզ չեն հասել. դրա հիմնական պատճառը նախ 1170 թ. սելջուկյան ամիրա Ելտկուզ աթաբեկի հրոսակների կողմից Բաղաբերդի գրավումն է, երբ ոչնչացվեց նաև Տաթևի վանքից բերդում ի պահ տրված ավելի քան 10.000 ձեռագիր (Օրբէլեան, 1910, 336), իսկ 20-րդ դարասկզբին տեղի վանահոր կողմից մի շարք ձեռագրեր են այրվել: Այս վերջին սոսկալի տեղեկությունն ավանդած Մեսրոպ Մագիստրոսն ուղղակիորեն չի նշում այդ վանահոր անունն ու նրա այրած ձեռագրերի թվաքանակը (Տէր-Մովսիսեան, 1938, 20), մինչդեռ ձեռագրագետ Օնիկ Եգանյանին հետագայում հաջողվել է Մաշտոցյան Մատենադարանում պահվող մի վավերագրի վերջին ին փաստագրել Մեսրոպ Մագիստրոսի ձեռքով նշված մի գրություն, ըստ որի՝ հիշյալ ձեռագրերն այրած վանահայրը Ներսես վրդ. Մելիք-Թանգյանն է, իսկ ձեռագրերի ընդհանուր թիվը՝ 64, որոնք իբր անպիտան ու քայքայված են համարվել (Եգանեան, 2014, 53):

Թեև ակնհայտ մեծաթիվ ձեռագրական կորուստներին, մեզ է հասել Տաթևում գրված և տեղի գրատանը պահված շուրջ 300 ձեռագիր մատյան: Այդ ձեռագրերի գրեթե կեսն ընդօրինակվել է Տաթևում և համանուն անապատներում (Հալիձորի Հարանց և Տաթևի Մեծ), որոնցից ավելի քան 100-ն ունեն գրչության խոսուն հիշատակարաններ: Դրանց հիմամբ կարող ենք արձանագրել, որ 1282-1864 թթ. ընդգրկող ժամանակաշրջանում Սբ Եվստաթեոս-Եվստաթե-Ստաթե առաքյալի անունը վկայված է միայն 15-րդ դարից սկսած, առավելապես Գրիգոր Տաթևացու ռաբունապետության և համալսարանի գործունեության ծաղկման շրջանում, երբ աշխուժացել էր նաև տեղի գրչական կյանքը: Այս առումով հետաքրքիր են հիշատակարաններում գրչավայրը տեղորոշող ձևակերպումները, որոնք հաճախ կաղապարված բնույթ ունեն: Մեր ուսումնասիրած օրինակների հիմամբ կարող ենք ընդհանուր առմամբ ասել, որ գրչության վայրը հատկանշելիս՝ գրիչները, ընդունված կարգի համաձայն, հիմնականում վկայաբերել են ինչպես բուն վանքի, այնպես էլ նրա երեք սուրբ եկեղեցիների անունները՝ վանքն ու միաբանական ուխտը բնութագրելով Սբ Եվստաթե կամ Ստաթե առաքյալի անվամբ, իսկ Կաթողիկե եկեղեցին՝ ոչ թե Սբ Պողոս-Պետրոս, այլ ընդհանրական՝ Սբ Առաքելոց (երբեմն՝ Առաքելոյ)՝ առանց ընդգծելու առաքյալների անունները: Կան ձեռագրեր, որոնց հիշա-

տակարաններում վանքի Կաթողիկե եկեղեցին ևս ուղղակի Սբ Եվստաթե առաքյալի անունով է վկայված: Հետաքրքրական է, որ Կաթողիկեն երբեմն հիշվում է նաև Սբ Նշան (Սբ Խաչ) անունով, որ, թերևս, եկեղեցու տեղում ավելի վաղ գոյություն ունեցած փոքր եկեղեցու անունն էր: Վանքի մյուս երկու եկեղեցիները հիշատակարաններում վկայված են իրենց իսկ անուններով՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ և Սբ Աստվածածին: Թերևս բացառություն են 17-րդ դարում գործած Մինաս Երզնկացի գրչի թողած 1613 թվակիր հիշատակարաններում Կաթողիկե եկեղեցին նաև Սբ Պողոս-Պետրոս առաքյալների անվամբ հիշատակումները (ԺԷ դ. հիշ./Ա, 1974, 482-484)[11], կամ ծագումով Տաթևի վանքից Հայաստանի պատմության թանգարանում պահվող ասեղնագործ զույգ ուրարների արձանագրություններում (1738 թ.) նաև վանքի գլխավոր առաքյալների՝ Սբ Պողոսի և Սբ Պետրոսի անունների վկայված լինելը (Մուշեղյան, 1964, 99): Մի երևույթ, որը թույլ է տալիս արձանագրել, որ տևական դադարից հետո Տաթևում դարձյալ վերականգնվել է Սբ Պողոս-Պետրոս առաքյալների անունները հիշատակելու ավանդույթը:

## Եզրակացություններ

Սյունյաց պատմագիր Ստեփանոս Օրբելյանը մանրամասն նկարագրում է Տաթևի վանքի Կաթողիկե եկեղեցու կառուցումն ու Սբ Պողոս–Պետրոս առաքյալների նշխարների ամփոփումը տաճարի զույգ մույթերի հիմքերում՝ չհիշատակելով Քրիստոսի կամ Սբ Թադեոսի ենթադրյալ աշակերտ Սբ Եվստաթեոս - Եվստաթե - Ստաթեին: Վերջինիս անունը վկայված չէ նաև վաղ շրջանի մատենագրական և վարքագրական աղբյուրներում:

Պետք է արձանագրել, որ Տաթևի վանքի՝ ավանդաբար Եվստաթեոսի վանք կամ ուխտ (միաբանություն) բնորոշումը գրավոր աղբյուրներում 15-րդ դարից վաղ չէ, հատկապես, երբ նկատի ենք առնում Վարդան Արևելցուն վերագրվող մեզ հասած «Աշխարհացոյց»-ի՝ ուշ շրջանի ընդօրինակություն լինելը:

Սբ Պողոս-Պետրոս առաքյալների անունների քողարկումն ու վանքը ենթադրյալ Սբ Եվստաթեոս առաքյալի անվան հետ զուգակցելը կարելի է

[11] Սբ Պողոս-Պետրոս առաքյալների անունների քողարկման փաստի առնչությամբ ուշագրավ է նաև Երևանի եպիսկոպոսանիստ Սբ Պողոս-Պետրոս եկեղեցու՝ ձեռագրերում համատարած Երկուերեսնի մականվամբ հիշատակվելը (Հարությունյան, 2021, 87-88):

համարել ժամանակի եկեղեցաքաղաքական պայմանների թելադրանք, երբ Սյունիքում ակտիվորեն տարածվում էր ունիթորական շարժումը՝ Նախիջևանի Քռնա կենտրոնով, ինչը դավանաբանական առումով լրջագույն սպառնալիք էր ավանդական Հայ եկեղեցուն: Այս տեսանկյունից, թերևս, սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ էր Սյունյաց հոգևոր և եպիսկոպոսանիստ կենտրոնն առաքելադիր հռչակելու հիմնական պատճառը:

Տաթև տեղանունը քանիցս հիշվում է մատենագրական և վիմագրական աղբյուրներում, որոնցից վաղագույնը, թերևս, «Ներսեսյան» գահնամակում պահպանված տոհմանունն է՝ «Տաթևյանք», ապա նաև՝ Օրբելյանի վկայությունները, 13–14–րդ դդ. ձեռագրերն ու վանքի ժամանակամերձ վիմագրերը, այսինքն՝ Տաթև տեղանունը վավերացվում է դեռևս վաղ միջնադարում և հետագա դարերում:

Սբ Եվստաթեոսի անվան շուրջ հյուսված ավանդության ու դրա կրոնական– քաղաքական դրդապատճառներից զատ, վանքի Կաթողիկեն այսօր նորից իր սուրբ առաքյալների՝ Պողոսի և Պետրոսի անունն է կրում, իսկ Սբ Եվստաթեոսի անվան հետ են կապում միայն վանքի պարսպից դուրս՝ հյուսիսարևելյան կողմում գտնվող կիսավեր հուշակոթողը: Մերօրյա ուսումնասիրությունները հստակեցնում են այդ կառույցի ճարտարապետական հորինվածքն ու զուգահեռը Աղիտուի վաղմիջնադարյան հուշակոթողի հետ (Այվազյան, Բաղիշյան, 2024), միայն թե թվագրման հարցում մենք հավանական ենք համարում 9–10–րդ դդ.՝ ժամանակամերձ Կաթողիկե եկեղեցու շինարարությանն ու ճոճվող–ության կանգնեցմանը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ վանքի վերազարթոնքին ընդառաջ՝ Սյունիքում փորձեր արվեցին վերականգնելու վաղ միջնադարում ավանդական դարձած կոթողային հուշարձանների հորինվածքային ձևերը՝ հուշակոթողներ, քառանիստ կոթողներ և այլն, որոնք, սակայն, մասնավոր օրինակներից զատ (Որոտնավանք, Ցաղաց քար և այլն), լայն տարածում այդպես էլ չգտան:

**Արսեն Է. Հարությունյան** – վիմագրագետ, զբաղվում է հայ միջնադարյան գրավոր ժառանգության ուսումնասիրությամբ: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է միջնադարյան Հայաստանի և գաղթավայրերի պատմության աղբյուրագիտությունը, միջնադարյան հնագիտությանն ու ձեռագրագիտությանն առնչվող խնդիրները: Հեղինակ և համահեղինակ է 11 գրքի և ավելի քան 100 գիտական հոդվածի:

# Գրականության ցանկ


1. **Ալիշան, Ղ. (1893).** *Միսական. փեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*: Վենետիկ: Սբ Ղազար:
2. **Ալիշան, Ղ. (1901).** *Արշալոյս քրիստոնէութեան հայոց*: Վենետիկ: Սբ Ղազար:
3. **Աճառյան, Հ. (1944).** *Հայոց անձնանունների բառարան* (հատ. Բ): Երևան: Պետական համալսարանի հրատարակչութիւն:
4. **Այվազյան, Ա. (2008).** *Նախիջևանի վիմագրական ժառանգությունը* (հատ. Դ), *Երնջակ գավառ*: Երևան: «Գասպրինտ»:
5. **Այվազյան, Ս., և Բադիշյան, Ա. (2024).** Տաթևի հուշակոթողի ճարտարապետությունը և ամրակայման նախագծի հայեցակարգը, *«Վարձք»*, 19 ( 9–20): Երևան: ՀՃՈՒ հիմնադրամ:
6. **Անթապյան, Փ. (1987).** *Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը* (գիրք Ա): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
7. **Առաքել Դաւրիժեցի (1990).** *Գիրք պատմութեանց*: Լ. Խանլարյանի (աշխ.): Երևան: ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն:
8. **Բարխուտարեանց, Մ. եպս. (1999)**. *Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ*: Պ. Չոբանեան (կազմող): Երևան: «Գանձասար»:
9. **Դիվան հայ վիմագրության (1960).** Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, (պրակ II): **Ս. Բարխուդարյան** (կազմող): Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:
10. **Եգանեան, Օ. (2014).** Տաթեւի գրատան ձեռագրերը, *«Աշխատութիւններ»*: Գ. Տէր-Վարդանեան (հրատ. պատրաստող), ( 50–61): Երևան: «Նաիրի»:
11. **Ժամագիրք (1885).** *Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ եւ Սրբոյ Ներսիսի Շնորհալւոյ*: Վաղարշապատ: Ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:
12. **ԺԷ դ. հիշ./Ա (1974).** Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (հատ. Ա, 1601–1620): Ա. Հովհաննիսյան և Վ. Հակոբյան (կազմողներ): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
13. **Լալայան, Ե. (2021).** *Երկեր* (հատ. 4): Ս. Հոբոսյան (կազմող): Երևան: ՀԱԻ հրատարակչություն:
14. **Խաչիկյան, Լ. (2017).** Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, *«Աշխատություններ»* (հատ. Բ), Շ. Խաչիկյան (կազմող), Պ. Մուրադյան (խմբ.), ( 51–156): Երևան: «Նաիրի» հրատարակչություն:
15. **Խառատյան, Հ. (2001).** Եղիշե առաքյալը և նրա առաքելությունը, *«Հայոց սրբերը և սրբավայրերը»*: Ս. Հարությունյան և Ա. Քալանթարյան (խմբ.), ( 49–60): Երևան: «Հայաստան»:
16. **Հարությունյան, Ա. (2021).** *Հին Երևանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուերեսնի-Սբ Պողոս-Պետրոս*: Սբ Էջմիածին: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչություն:

17. **Հարությունյան, Գ. (2014).** *Դավանաբանական և քաղաքական պայքարը* – Հայոց պատմություն (հատ. 2): Վ. Բարխուդարյան և այլք (խմբ. խորհուրդ), գիրք II, Միջին դարեր (IX դարի կես – XVII դարի առաջին կես), ( 383–388): Երևան: «Զանգակ»:
18. **Ղանալանյան, Ա. (1969).** *Ավանդապատում*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
19. **Միխայէլ Ասորի (1871).** *Ժամանակագրութիւն* տեառն **Միխայէլի Ասորւոց** պատրիարքի: Երուսաղէմ: Ի տպարանի Սրբոց Յակովբեանց:
20. **Միրիջանյան, Դ. (2017).** Կարենիսի վանքի Անդրեաս և Մատթեոս առաքյալների սարկոֆագ-մասունքարանը, *«Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ»*, հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, ( 182–186): Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
21. **Մկրտչյան, Ա. եպս. (2013).** *Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում*: Երևան: Պատմության ինստիտուտ:
22. **Մկրտչյան, Վ. աբդ. (2010).** Տաթև վանական համալիրի եկեղեցիների հիմնումը, *« Էջմիածին»*, 2010, Զ ( 92–103): Սբ Էջմիածին: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչություն:
23. **Մեսրոպ Վայոցձորեցի (2010).** *Մեսրոպայ երիցու Վայոցձորեցւոյ Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի*: Գ. Տէր-Վարդանեան (աշխ.), «Մատենագիրք Հայոց» (ԺԱ հատոր, Ժ դար, գիրք Ա, 631–746): Անթիլիաս-Լիբանան: Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւն:
24. **Մովսէս Կաղանկատուացի (1983).** *Պատմութիւն Աղուանից աշխարհի*: Վ. Առաքելյան (աշխ.): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
25. **ՄՅՀՁ ի Վենետիկ (1924).** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (հ. երկրորդ): Բ. վրդ. Սարգիսեան (կազմող): Վենետիկ: Մխիթարեան ուխտէն:
26. **Մուշեղյան, Ե. (1964).** Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների (պրակ 1), Հայերեն արձանագրությամբ առարկաներ: Ե. Մուշեղյան (աշխ.): Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:
27. **Յակոբեան, Ալ. (2011).** «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ», *«Բազմավէպ»*, 2011, 3–4 ( 485–550): Վենետիկ: Սբ Ղազար:
28. **Յայսմաւուրք (1730).** *Գիրք, որ կոչի Այսմաւուրք, որ պարունակէ յինքեան զձառս վարուց սրբոց եւ զնահատակութիւնս երանելի մարտիրոսացն եւ վկայից Քրիստոսի Աստուծոյ մերոյ*: Կ. Պոլիս: Ի տպարանի Գրիգոր դպրի Մարսլանեցւոյ:
29. **Շահխաթունեանց, Յովհ. եպս. (2014).** *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*: Ա. Տեր-Ստեփանյան (աշխ.): Սբ Էջմիածին: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչություն:
30. **Չամչյանց, Մ. (1985).** *Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը)*, (հատ. Ա): Երևան: ԵՊՀ հրատարակչություն:

31. **Պետրոսյան, Հ. (2017).** Վաճառի Սուրբ Ստեփանոս վանքի պեղումները և համաքրիստոնեական սրբերի ու մասունքների արդիականացման խնդիրները 13-րդ դարում, *«Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ»*, հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, զեկուցումներ և զեկուցումների դրույթներ ( 228-234): Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
32. **[Պետրոսյան, Հ.].** Դադիվանք. Սուրբ Դադիի և նրա գերեզմանի մասին - https://monumentwatch.org/hy/monument/%D5%A4%D5%A1%D5%A4%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2%D5%A4%D5%A1%D5%A4%D5%AB%D5%AB%D6%87%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80%D5%A5%D5%A6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B4/ - մուտք 22.12.2024):
33. **Սալլանթեանց, Մ. ծ. վրդ. (1831).** *Կրօնագիտութիւն քրիստոնէական ըստ ուղղափառ դաւանութեան առաքելական եկեղեցւոյ լուսաւորչակրօն հայոց*: Ի Մոսկով: Ի տպարանի Հայկական ճեմարանի տեարց Լազարեանց:
34. **Սիմեոն Երևանցի (2022).** *Ջամբռ*: Հ. Օհանյան (աշխ.): Երևան: Մատենադարան:
35. **Սմբատեան, Ա. եպս. (1930).** Համառօտ պատմութիւն Տաթեւի վանքի, *«Տաթեւ» տարեգիրք գրականութեան եւ արուեստի*, Ջ. տարի ( 276-350): Հալէպ-Սուրիա: «Արաքս»:
36. **Ստեփանոս Օրբէլեան (1859).** *Պատմութիւն նահանգին Սիսական* (հատ. Ա): Կ. վրդ. Շահնազարեանց (աշխ.): Փարիզ: Ի գործատան Կ. Վ. Շահնազարեանց:
37. **Ստեփանոս Օրբէլեան (1910).** *Պատմութիւն նահանգին Սիսական*: Թիֆլիս: Եկեղեցական տպարան Ն. Աղանեանցի:
38. **Ստեփանոս Օրբելյան (1986).** *Սյունիքի պատմություն*: Ա. Աբրահամյան (աշխ.): Երևան: «Սովետական գրող»:
39. **Ստեփանոս Օրբելյան (2023).** *Հակաճառություն ընդդեմ երկաբնակաց*: Գ. Թերզյան (աշխ.): Երևան: «Կիլիկյանպրինտ»:
40. **Վարդան վարդապետ (1960).** Վարդան վարդապետի *Աշխարհացոյց*: Հ. Պէրպէրեան (աշխ.): Բարիզ: «Արաքս»:
41. **Տէր-Մովսիսեան, Մ. արք. (1938).** *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները*: Երուսաղէմ: Տպարան Սրբոց Յակոբեանց:
42. **Ումառյան, Ս. (1981).** *Սյունիքը՝ դիցարան*: Երևան: «Հայաստան»:
43. **Օրմանեան, Մ. արք. (2001).** *Ազգապատում* (հ. Ա): Սբ Էջմիածին: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչութիւն:
44. **Harutyunyan, A. (2024).** *The Spiritual Citadel of Syunik: Tatev*, an illustrated investigation. Yerevan. Matenadaran.

## Bibliography (Latin Script)

1. **Acharyan, H. (1944).** *Hayots' andznanunneri baṛaran* (hat. B): Yerevan: Petakan hamalsarani hratarakch'ut'yun **(In Armenian)**.

2. **Alishan, Gh. (1893).** *Sisakan. teghagrut'iwn Siwneats' ashkharhi:* Venetik: Sb Ghazar **(In Armenian)**.
3. **Alishan, Gh. (1901).** *Arshaloys k'ristonēut'ean hayots':* Venetik: Sb Ghazar **(In Armenian)**.
4. **Ant'apyan, P'. (1987).** *Vardan Arewelts'i. kyankn u gortsuneut'yunĕ* (girk' A): Yerevan: HSSH GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.
5. **Aṛak'el Dawrizhets'i (1990).** *Girk' patmut'eants'*: L. Khanlaryan (ashkh.): Yerevan: HKHSH GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.
6. **Ayvazyan, A. (2008).** *Nakhijevani vimagrakan zhaṛangut'yunĕ* (hat. D), *Yernjak gavaṛ*: Yerevan: "Gasprint" **(In Armenian)**.
7. **Ayvazyan, S., & Badishyan, A. (2024).** Tat'ewi hushakot'oghi chartarapetut'yunĕ ew amrakayman nakhagtsi hayets'akargĕ, *"Vardzk"*, 19 (ējer 9-20): Yerevan: HCHU himnadram **(In Armenian)**.
8. **Barkhutareants', M. yeps. (1999).** *Aguanits' yerkir ew drats'ik'. Arts'akh*: Ch'obanean (kazmogh): Yerevan: "Gandzasar" **(In Armenian)**.
9. **Ch'amch'yants', M. (1985).** *Hayots' patmut'yun (skzbits' minch'ew 1784 t'vakanĕ)* (hat. A): Yerevan: YPH hratarakch'ut'yun **(In Armenian)**.
10. **Divan hay vimagrut'yan (1960).** *Gorisi, Sisiani ew Ghap'ani shrjanner* (prak II): S. Barkhudaryan (kazmogh): Yerevan: HSSṚ GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.
11. **Ghanalanyan, A. (1969).** *Avandapatum*: Yerevan: HSSH GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.
12. **Harut'yunyan, A. (2021).** *Hin Yerevani yepiskoposanist yekeghets'in. Yerkueresni-Sb Poghos-Petros*: Sb Ējmiatsin: Mayr At'oṛ Sb Ējmiatsni hratarakch'ut'yun **(In Armenian)**.
13. **Harut'yunyan, G. (2014).** *Davanabanakan ew k'aghak'akan payk'arĕ* – Hayots' patmut'yun: V. Barkhudaryan ew aylk' (khmb. khorhurd), h. 2, girk' II, Mijin darer (IX dari kes – XVII dari aṛajin kes), (ĕjer 383-388): Yerevan: "Zangak" **(In Armenian)**.
14. **Khach'ikyan, L. (2017),** Artazi haykakan ishkhanut'yunĕ ew Tsortsori dprots'ĕ, *"Ashkhatutyunner"* (hat. B): Sh. Khach'ikyan (kazmogh), Muradyan (khmb.): Yerevan: "Nairi" hratarakch'ut'yun **(In Armenian)**.
15. **Khaṛatyan, H. (2001).** Yeghishe aṛak'yalĕ ew nra aṛak'elut'yunĕ, *"Hayots' srberĕ ew srbavayrerĕ"*: S. Harut'yunyan & A. K'alant'aryan (khmb.): Yerevan: "Hayastan" **(In Armenian)**.
16. **Lalayan Y. (2021).** *Yerker* (hat. 4): S. Hobosyan (kazmogh): Yerevan: HAI hratarakch'ut'yun **(In Armenian)**.
17. **Mesrop Vayots'dzorets'i (2010).** *Mesropay yerits'u Vayots'dzorets'woy Patmut'iwn Srboyn Nersisi Hayots' hayrapeti:* G. Tēr-Vardanean (ashkh.), "Matenagirk' Hayots" (ZHA hator, ZH dar, girk' A): Ant'ilias-Libanan: Kilikioy Hayots' Kat'oghikosut'yun **(In Armenian)**.
18. **Mikhayēl Asori (1871).** *Zhamanakagrut'iwn* teaṛn **Mikhayēli Asorwots'** patriark'i: Yerusaghēm: I tp. Srbots' Yakovbeants' **(In Armenian)**.
19. **Mirijanyan, D. (2017).** Karenisi vank'i Andreas ew Matt'eos aṛak'yalneri sarkofag-masunk'aranĕ, *"Hayastanĕ ew arewelak'ristoneakan k'aghak'akrt'ut'yunĕ. B"*, hayaget-byuzandaget Karen Yuzbashyani tsnndyan 90-amyakin nvirvats mijazgayin gitazhoghov, zekuts'umner ew zekuts'umneri druyt'ner (ĕjer 182-186): Yerevan: HH GAA "Gitut'yun" hratarakch'ut'yun **(In Armenian)**.
20. **Mkrtch'yan, A. yeps. (2013).** *Syunyats' metropolitakan at'oṛĕ Ōrbelyanneri ishkhanut'yan zhamanakashrjanum*: Yerevan: Patmut'yan institut **(In Armenian)**.
21. **Mkrtch'yan, V. abgh. (2010).** Tat'ew vanakan hamaliri yekeghets'ineri himnumĕ, *"Ējmiatsin"*, 2010, Z (6), ējer 92-103 **(In Armenian)**.

22. **Movsēs Kaghankatuats'i (1983).** Patmut'iwn Aghuanits' ashkharhi: V. Aṛak'elyan (ashkh.): Yerevan: HSSH GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.
23. **MTS'HDZ i Venetik (1924).** Mayr ts'uts'ak hayerēn dzeṛagrats' Matenadaranin Mkhit'areants' i Venetik (h. yerkrord): B. vrd. Sargisean (kazmogh): Venetik: Mkhit'arean ukhtēn **(In Armenian)**.
24. **Musheghyan, Y. (1964).** *Hatkanshakan ts'uts'ak t'angaranayin zhoghovats'uneri* (prak 1). *Hayeren ardzanagrut'yamb aṛarkaner*: Y. Musheghyan (ashkh.): Yerevan: HSSR GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.
25. **Ōrmanean, M. ark'. (2001).** *Azgapatum* (hat. A): Sb Ējmiatsin: Mayr At'oṛ Sb Ējmiatsni hratarakch'ut'yun **(In Armenian)**.
26. **Petrosyan, H. (2017).** Vachaṛi Surb Step'anos vank'i peghumnerě ew hamak'ristoneakan srberi u masunk'neri ardiakanats'man khndirnerě 13-rd darum, *"Hayastaně ew arewelak'ristoneakan k'aghak'akrt'ut'yuně. B"*, hayaget-byuzandaget Karen Yuzbashyani tsnndyan 90-amyakin nvirvats mijazgayin gitazhoghov, zekuts'umner ew zekuts'umneri druyt'ner (ējer 228-234): Yerevan: HH GAA "Gitut'yun" hratarakch'ut'yun **(In Armenian)**.
27. **[Petrosyan, H.]** Dadivank. Surb Dadii ew nra gerezmani masin - https://monumentwatch.org/hy/monument/%D5%A4%D5%A1%D5%A4%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2%D5%A4%D5%A1%D5%A4%D5%AB%D5%AB%D6%87%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80%D5%A5%D5%A6%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B4/ - 22.12.2024).
28. **Sallant'eants', M. ts'. vrd. (1831).** *Krōnagitut'iwn k'ristonēakan ěst ughghap'aṛ dawanut'ean aṛak'elakan yekeghets'woy lusaworch'akrōn hayots'*: I Moskov: I tp. Haykakan chemarani tearts' Lazareants' **(In Armenian)**.
29. **Shankhat'uneants', Yovh. yeps. (2014).** *Storagrut'iwn Kat'ughikē Ējmiatsni ew hing gawaṛats'n Araratay*: A. Ter-Step'anyan (ashkh.), Sb Ējmiatsin: Matr At'oṛ Sb Ējmiatsni hratarakch'ut'yun **(In Armenian)**.
30. **Simeon Yerewants'I (2022).** *Jambṛ*: H. Ōhanyan (ashkh.): Yerevan: Matenadaran **(In Armenian)**.
31. **Smbatean, A. yeps. (1930).** Hamaṛōt patmut'iwn Tat'ewi vank'i, *"Tat'ew"* taregirk' grakanut'ean ew aruesti, Z (6) tari (ēj 276-350): Halēp-Suria: "Arak's" **(In Armenian)**.
32. **Step'anos Ōrbēlean (1859).** *Patmut'iwn nahangin Sisakan* (hat. A): Karapet vrd. Shahnazareants' (ashkh.): P'ariz: I gortsatan K. V. Shahnazareants' **(In Armenian)**.
33. **Step'anos Ōrbēlean (1910).** *Patmut'iwn nahangin Sisakan*: T'iflis: Yelek'trasharzh tp. N. Aghaneants'i **(In Armenian)**.
34. **Step'anos Ōrbelyan (1986).** *Syunik'i patmut'yun*: A. Abrahamyan (ashkh.): Yerevan: "Sovetakan grogh" **(In Armenian)**.
35. **Step'anos Ōrbelyan (2023).** *Hakachaṛut'yun ěnddem yerkabnakats'*: G. T'erzyan (ashkh.): Yerevan: "Kilikyanprint" **(In Armenian)**.
36. **Tēr-Movsisean, M. ark'. (1938).** *Haykakan yerek' mets vank'eri` Tat'ewi, Haghartsni ew Dadi yekeghets'inerě ew vanakan shinut'yunnerě*: Yerusaghēm: Tparan Srbots' Yakobeants' **(In Armenian)**.
37. **Umaṛyan, S. (1981).** *Syunik'ě` dits'aran*: Yerevan: "Hayastan" **(In Armenian)**.
38. **Vardan vardapet (1960).** Vardan vardapeti *Ashkharhats'oyts'*: H. Pērpērean (ashkh.): Bariz: "Arak's" **(In Armenian)**.
39. **Yakobean, Al. (2011).** "Gahnamak azatats' ew tanutērants' Hayots'" ew "Zoranamak", *"Bazmavēp"*: 3-4 (ējer 485-550): Venetik: Sb Ghazar **(In Armenian)**.

40. **Yaysmawurk' (1730).** *Girk', or koch'i Aysmawurk', or parunakē yink'ean zchaṛs varuts' srbots' ew znahatakut'iwn yeraneli martirosats'n ew vkayits' K'ristosi Astutsoy meroy*: K. Pōlis: I tp. Gr. dpri Marsĕwanetswoy **(In Armenian)**.
41. **Yeganean Ō. (2014).** Tat'ewi gratan dzeṛagrerĕ, *"Ashkhatut'iwnner"*: G. Tēr-Vardanean (hrat. patrastets): (ējer 50-61): Yerevan: "Nairi" **(In Armenian)**.
42. **Zhamagirk' (1885).** *Zhamagirk' Hayastaneayts' s. ekeghets'woy` arareal srbots' t'argmanch'ats'n merots' Sahakay ew Mesropay ew yereneli hayrapetats'n merots' Giwtoy ew Yovhannu Mandakunwoy ew Srboy Nersisi Shnorhalwoy*: Vagharshapat: I tp. Srboy Kat'ughikē Ējmiatsni **(In Armenian)**.
43. **ZHĒ d. hish./A (1974).** Hayeren dzeṛagreri ZHĒ dari hishatakaranner (hat. A, 1601-1620): A. Hovhannisyan & V. Hakobyan **(**kazmoghner): Yerevan: HSSH GA hratarakch'ut'yun **(In Armenian)**.